

Երկրակեղեկի կառուցվածքի հիմնական գծերը. Երկրակեղեկի մորֆոլոգիական գլխավոր բաղադրիչներն են՝ ցամաքանազգածները (միջին բարձրությունը՝ 850 մ) և ենթաօվկիանոսային տափարակները (միջին խորությունը՝ 4000 մ):

Ցամաքանազգածների գլխավոր ստրուկտուրաներն են՝ պլատֆորմները և գեոսինկլինալները: Պլատֆորմները քառանկյանը մոտ եզրագծով և տափարակ, ալիքավոր մակերևույթով սալարեկորներ են (մինչև մի քանի հզ. կմ լայնով), որոնք գրավում են մայր ցամաքների 2/3-ը: Դրանց կտրվածքի վերին մասը չծալքավորված նստվածքային շերտախմբեր են, որոնց տակ գտնվում է ծալքավորված, գրանիտացված և ինտրոկիվներով հատված հիմքը: Պլատֆորմների ներքին գլխավոր ստրուկտուրաներ են՝ անտ ե կ լ ի գ ն ե ր ը, ս ի ն ե կ լ ի գ ն ե ր ը, ա վ լ ա կ ո գ ե ն ն ե ր ը, ո ի ֆ տ ա յ ի ն գ ո տ ի ն ե ր ը, վ ա հ ա ն ն ե ր ը և ե գ ր ա յ ի ն ի շ վ ա ծ ք ն ե ր ը:

Գեոսինկլինալները նեղ, զալարուն գոտիների ձեռվ դասավորված են պլատֆորմների միջև կամ նրանց եզրերում և, ի տարբերություն պլատֆորմների, դրսեռվում են որպես երկրակեղեկի խոշոր դեֆորմացիաների ու ծալքավոր լեռնակազմության, ակտիվ հրաբխականության ու խորքային մագմատիզմի, մետամորֆիզմի, բարձր սեյսմիկության, գրավիտացիոն մեծ անոմալիաների, ուժգին դենուդացման, ակումուլյացման և հանքագոյացման մարզեր: Գեոսինկլինալային մարզերի գլխավոր ստրուկտուրաներն են՝ մ ե գ ա ն տ ի կ լ ի ն ո ր ի ո ւ մ ն ե ր ը, ն ե ր ք ի ն զ ա ն գ վ ա ծ ն ե ր ը, մ ի շ լ ե ն ն ա յ ի ն ո ւ ն ա խ ա լ ե ո ն ա յ ի ն ի շ վ ա ծ ք ն ե ր ը:

Օվկիանոսային մարզերի գլխավոր ստրուկտուրաներն են՝ օվկիանոսային պլատֆորմները (թալասոկրատոնները), ներօվկիանոսային լեռնաշղթաները (գեոնիֆտոգենալները), ոիֆտային իջվածք-

ների սկզբնավորման զոնաները՝ Ներատլանտյան, Արևելափաղաղօվկիանոսայան, Արևելահնդօվկիանոսայան և շուրջօվկիանոսային անդունդները (տեկտոգեններ), որոնք հայտնի են նաև որպես Վենինգ-Մեյնեցի բացասական գրավիտացիոն անոմալիաների գոտիներ, Շեսսի տեկտոգեններ կամ Բենյոֆի զոնաներ՝ 7—11 կմ խորությամբ (Ճավայի, Մարիանյան, Տոնգայի, Ֆիլիպինյան, Մինդանաոյի, Ճապոնական, Կուրիլյան, Ալեության, Գվատեմալայի): Ըստ նորագույն գլոբալ տեկտոնիկայի հիպոթեզի, Երկրակեղեկը ներօվկիանոսային լեռնաշղթաների երկարությամբ ոիֆտային զոնաներով խըզվում է, և նրա հանդիպակաց սալարեկորները, միմյանցից հեռանալով, խորասուզվում են պատյանի մեջ, հալվում և առաջացնում են լիթոգեն մագմա: Երկրակեղեկի կառուցվածքի ու դինամիկայի մեջ կարևոր դեր են խաղում նաև խորքային խզման զոնաները, որոնք, հավանաբար, թափանցում են պատյանի մեջ մինչև 700—750 կմ խորությունները: